ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ (1918 թ. սեպտեմբեր – նոյեմբեր)

ՅՈՒՐԻԿ ՂՈՒԼՅԱՆ

Հայ-ադրբեջանական 1918-1920 թթ. հարաբերությունների պատմության ուսումնասիրման ու լուսաբանման ուղղությամբ հայ պատմագիտությունը մեծ աշխատանք է կատարվել 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի առաջին տասնամյակում:

Գնահատելով ու արժևորելով թեմայի հետազոտության բնագավառում առկա ձեռքբերումները, միաժամանակ անհրաժեշտ է փաստել, որ հիմնահարցի պատմության ուսումնասիրությունը չի սպառվել, և որ հայ պատմագիտական միտքը անելիքներ ունի այս ասպարեզում, քանի որ հիմնախնդիրը բավականին ընդգրկուն է և կարիք ունի լրացուցիչ անդրադարձների: Դրանցից մեկն էլ 1918-1920 թթ. Ադրբեջանի հայության իրավական-քաղաքական դրության խնդիրն է, որի մի շրջանին է նվիրված ստորև ներկայացվող հոդվածը:

1918 թ. սեպտեմբերյան ջարդերից հետո էլ Բաքվի հայությունը շարունակում էր մնալ ահաբեկված, անպաշտպան ու անօգնական՝ ամեն րոպե սպասելով հերթական բռնություններին: Թուրքական հրամանատարության հովանու ներքո գործող ադրբեջանական իշխանություններն անարգել շարունակում էին հայերի նկատմամբ բռնության և հալածանքի քաղաքականությունը: «Նրանցից շատերը, որոնցից ասկյարները բռնի խլել էին հագուստն ու ոտնամանները, մերկությունը ծածկելու համար հագնում էին կեղտոտ պարկեր և այդ տեսքով ոտաբոբիկ դուրս գալիս ստիպողական աշխատանքների: Նրանց շարք էին կանգնեցնում և ծեծով ու տանջանքներով ստիպում բարձրաձայն կրկնել, որ իրենք գյավուր շներ են: Լծում էին ծանր բեռնավորված սայլերին ու արաբաներին, իսկ ասկյարները քաղաքացիների աչքի առաջ մտրակներով խփում էին նրանց և գրաստի նման քշում՝ նրանց հետ վարվելով ավելի վատ, քան կվերաբերվեին անասուններին»[1],- գրում է դեպքերի ականատես Բախշի Իշխանյանը:

Բաքվում Ադրբեջանի կառավարության հաստատվելուց հետո սկսվեցին ազատ մնացած հայերի՝ գլխավորապես մտավորականների զանգվածային ձերբակալություններ: Իսկ ազատված հայերին ադրբեջանական խուժանը շարունակում էր պարբերաբար ենթարկել շանտաժի ու հալածանքների: Այդ սարսափելի պատկերը լրացնում էին «անօգնական մնացած վիրավորներն ու փողոցներում թափված երեխաները»[2]: Փողոցներում ու տներում իրականացվում էին հայերի ձերբակալություններ, կազ-

[1] **Ишханян Б**. Великие ужасы в городе Баку. Тифлис, 1920, с. 146–148.
[2] «Աշխատավոր», Թիֆլիս, 1918, 18 հոկտեմբերի:

մակերպվում շուրջկալներ: Առաջին օրերին ձերբակալվեցին 14 նշանավոր հայեր, որոնց թվում էին նաև Կովկասյան բանկի տնօրեն Մ. Աթաբեկյանը, Առևտրական բանկի տնօրեն Խուբլարյանը, Հակոբ Մանանդյանը: Ձերբակալվածներից փրկվում են միայն մի քանիսը, որոնց մեջ էր Ս. Թաղիանոսյանը: Վերջինիս անխուսափելի մահից ազատում է Լեսները՝ «Նոբել եղբայրների» գանձարկղից խոշոր կաշառք վճարելով[3]: Հայտնի հայերից սեփական բնակարանում գնդակահարվում է Բաքվի դումայի անդամ, Ազգային խորհրդի գանձապահ Ստեփան Այվազյանը: Բնակարան ներխուժածների պարագլուխը Ս. Այվազյանին լավ ճանաչող մի ադրբեջանցի էր, որը, նրա հետ համբուրվելով, խոստացել էր, թե նրա ու ընտանիքի հետ ոչինչ չի պատահի, սակայն իր հեռանալուց հետո ուղարկել էր մեկ ուրիշ խումբ[4]: Մելիքյան եղբայրներին ազատելու համար հայերը միջնորդելու խնդրանքով դիմել էին նավթարդյունաբերող Շ. Ասադուլաևին, որի կյանքը հայերը փրկել էին 1918 թ. մարտյան հայտնի իրադարձությունների ժամանակ: Նավթարդյունաբերողի դիմումին պատասխանելով՝ Ադրբեջանի ՆԳ նախարար Բեհբութ խան Ջիվանշիրը ասել էր. «Ի՞նչ եք ասում, ես համաձայնել եմ նախարար դառնալ բացառապես այն բանի համար, որպեսզի հայերի վերջը տամ»[5]: Իսկ երբ հաղորդում են հայ բանտարկյալների մասին, արձագանքում է. «Թող սատկեն նրանք, որպես շներ»[6]: Նախարարներից մեկն էլ, դժգոհելով, որ սպանդի են ենթարկվել շարքային հայերը, այլ ոչ թե հարուստները, ասել էր. «Պոչը կտրել են, իսկ գլուխը՝ թողել»[7]:

Անդրադառնալով սեպտեմբերյան դեպքերին հաջորդած Բաքվի դրությանը՝ բարոն ֆոն դեր Գոլցը Թիֆլիսում գերմանական պատվիրակության ղեկավար ֆոն Կրեսին Բաքվից տեղեկացնում էր. «Սկսվում է հայերի պարբերաբար հետապնդում. հայ մտավորականներից ում գտնում, ձերբակալում են: Երեկ տարան շղթայակապ քսան այդպիսի մարդկանց»[8]: Բանտերը, Սալյանի զորանոցը, կրկեսը և մյուս տեղերը լցված էին հազարավոր հայերով, որոնք գտնվում էին սոսկալի պայմաններում: Նրանց ոչ մի մեղադրանք չէր ներկայացվում: Ձերբակալվածների ծանր վիճակի մասին իշխանություններին հղած բազմաթիվ դիմումներին ի պատասխան՝ իշխանության ներկայացուցիչները հայտարարում էին. «Թող բոլորը սովից սատկեն»[9]: Շաբաթներ շարունակ զուր սպասելով մեղադրանքի ներկայացման՝ նրանցից շատերին ուղարկում էին անհայտ ուղղությամբ, և նույնիսկ մոտ հարազատները չգիտեին, թե որտեղ են նրանք և ինչ պայմաններում են գտնվում[10]: Բաքվի և շրջանի հայ բնակչությունը օրենքից ու պաշտպանությունից դուրս էր: Խուզարկությունների անվան տակ հայե-

---

[3] Տե՛ս **Խ. Դադայան**, Հայերը և Բաքուն, Եր., 2006, էջ 134:
[4] Տե՛ս նույն տեղը:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում, էջ 135:
[7] Նույն տեղում:
[8] **Ա. Մանուչարյան**, 1918 թ. Բաքվի հայկական ջարդերը (ԳՖՀ-ի արտաքին գործերի մինիստրության քաղաքական արխիվի փաստաթղթերը), «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1990, թիվ 6, էջ 82:
[9] «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ.», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2003, էջ 147:
[10] Տե՛ս **Ի. Մովսեսովա, Ա. Հովնանյան**, Բաքվի ջարդերը, Եր., 1992, էջ 70-71:

րի բնակարաններում գործնականում իրականացվում էր բացահայտ թալան, բռնագրավման անվան տակ նրանց բնակարաններից տարվում էր ողջ ունեցվածքը: Անարգվում էին հայերի պատիվն ու արժանապատվությունը:

Հայերի նկատմամբ ադրբեջանական իշխանությունների կամայականությունները միայն Բաքվով չսահմանափակվեցին: Դրանք դրսևորվում էին ցանկացած քայլափոխի՝ Ադրբեջանի ողջ տարածքում: Այսպես, համաձայն «Հորիզոն»-ի հաղորդագրության՝ «Ադրբեջանի հանրապետության մեջ, Աղստաֆա կայարանում ասկյարներն ու քրդերը շարունակում են բռնաբարումներ կատարել և բռնի աշխատեցնել հայ գաղթականներին և ճանապարհորդներին»[11]:

Բաքվի սեպտեմբերյան կոտորածի օրերին նոր ողբերգություն ապրեց Գեոկչայի հայությունը: Նրանցից փրկվել հաջողվեց միայն 3 հազարին: Տունդարձի ճանապարհին կորցնելով մոտ 1500 մարդ՝ իրենց բնակավայրերը նրանք գտան ավերված ու թալանված: 1500-ից 500-ը հիվանդության պատճառով մահացավ: Գեոկչայի 21 հայկական գյուղերի 18000 բնակչից փրկվեց հազիվ 1000 հոգի, այն էլ՝ հյուծված և ուժասպառ[12]:

Ամենից ցավոտը 1918 թվականի կոտորածների ընթացքում գերված հայերի հարցն էր: Նրանց մեծ մասին բռնի մահմեդականացրել էին, տղաներին՝ թլպատել, իսկ տղամարդկանց՝ հարկադիր աշխատեցրել: Հայ ընտանիքների մի մասն էլ, չդիմանալով թշվառությանն ու աղքատությանը, հարկադրաբար բատրակություն էր անում ադրբեջանցիների տներում[13]:

Աներևակայելի չափերով կոտորածի ու թալանի ենթարկվելով՝ հայերն ապրում էին անտանելի պայմաններում: Պատահում էին սովամահության դեպքեր: Հայերը հաճախ պաշտպանություն էին գտնում լեհերի, հրեաների ու վրացիների մոտ: Խոսում էին այն մասին, թե «տաճիկները ուզում են արտաքսել հայերին Բաքվից դեպի Ապշերոնի և Մուղանի ավազուտները»[14]: Այդ նույն օրերին Գանձակից «Աշխատավոր»-ին հաղորդում էին, որ Ադրբեջանի կառավարությունը մտադիր է դատել Բաքուն գրավելու ժամանակ ձերբակալված հայ մտավորականներին[15]: Մտահոգ այս իրավիճակից՝ Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը 1918 թ. հոկտեմբերի 3-ին ուղերձով դիմեց արևելքում թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Խալիլ փաշային, որում, ներկայացնելով Բաքվի աղետը, խնդրեց Բաքվում խաղաղություն և կարգուկանոն հաստատել: Այդ բոլորի մասին տեղեկացվեց նաև Վրաստանի ԱԳՆ-ն[16]: Ադրբեջանի իշխանությունների ամենաթողության ու անտարբերության դեմ ՀՀ կառավարությունն իր ներկայացուցիչ Ա. Ջամալյանի միջոցով հայտագիր հղեց նաև Թիֆլիսում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Ջաֆարովին, որ վերջինս իր կառավարությանը հաղորդի ՀՀ կառա-

---

[11] «Հորիզոն», Եր., 1918, 29 սեպտեմբերի:

[12] Տե՛ս **Ս. Միրզոյան**, Փաստաթղթեր Նուխիի և Արեշի հայերի 1919-1920 թթ. ջարդերի մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1992, թ. 1, էջ 149-153:

[13] Տե՛ս նույն տեղը:

[14] «Զանգ», Եր., 1918, 19 հոկտեմբերի:

[15] Տե՛ս «Աշխատավոր», 1918, 5 հոկտեմբերի:

[16] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 79, թ. 12:

վարության ամենակտրուկ բողոքը՝ հայ ազգաբնակչության կոտորածի դեմ ժամանակին միջոցներ ձեռք չառնելու համար: Թիֆլիսի իր ներկայացուցչի միջոցով ՀՀ կառավարությունը միաժամանակ պնդում էր, որ Ադրբեջանի կառավարությունը գործնական քայլեր ձեռնարկի մեղավորներին պատժելու ուղղությամբ, դադարեցվեն բռնություններն ազատված հայերի նկատմամբ[17]: Ա. Ջամալյանի՝ 1918 թ. հոկտեմբերի 16-ի թիվ 1249 հուշագրին ի պատասխան՝ ստացվեց Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Ջաֆարովի պատասխանը, որում նա թուրքական դիվանագիտությանը բնորոշ ոճով փորձում էր մասնավորապես համոզել, որ Ադրբեջանի կառավարությունն իր գործունեության ամբողջ ընթացքում շարունակում է մեծ ջանք թափել՝ հասնելու կատարյալ հաշտության դարերով կողք կողքի ապրող երկու ազգերի միջև: «Առաջին հերթին այդ տեսակետից նա (կառավարությունը - Յու. Ղ.) աշխատել է հանգստացնել այն գրգռումը, որ առաջ է եկել Ադրբեջանի մահմեդական ազգաբնակչության մեջ այս տարվա մարտ ամսին տեղի ունեցած դեպքերի պատճառով, երբ հայերը, բոլշևիկների անվան տակ, կոտորեցին մահմեդականներին Բաքվում ու Շամախում, և երբ զոհերի թիվը, պաշտոնապես ստուգված տվյալների համաձայն 10 հազար մարդուց անց էր»[18],- ասված էր հուշագրում:

Բաքվի դեպքերից հետո՝ սեպտեմբերի 19-ին, Ադրբեջանի նախագահ-նախարարը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որում ասվում էր. «Ադրբեջանը բնակեցնող բոլոր քաղաքացիները, առանց ազգության ու դավանանքի տարբերության, պետք է օգտվեն կառավարության միևնույն վերաբերմունքից, որը հավասար ձևով պետք է ապահովի նրանց կյանքը, գույքն ու բոլոր քաղաքացիների իրավունքները»[19]: Նմանատիպ հայտարարություններ արվեցին նաև թուրքական հրամանատարության կողմից: Սակայն իրականում այդ երաշխիքները հայերի պարագայում չէին գործում:

Հայերի նկատմամբ շարունակվող հետապնդումներն էին պատճառը, որ 1918 թ. հոկտեմբերի 23-ին Բաքվի հայոց հոգևոր առաջնորդ Բագրատ եպիսկոպոսը յոթ կետից բաղկացած հաշվետու գրություն ուղարկեց Ադրբեջանի նախարար-նախագահին[20], որում բացահայտ փաստեր ներկայացրեց հայերի իրավազուրկ լինելու մասին՝ շարունակվող ծերբակալությունների, զանգվածային շուրջկալների, հայերի բնակարաններում իրականացվող խուզարկությունների, բռնագրավման անվան տակ նրանց ունեցվածքը խլելու վերաբերյալ: Գրության մեջ մատնացույց էր արվում հայ գերի զինվորների դրությունը, որոնք ռուս, վրացի, հրեա և այլ ազգությունների գերիների համեմատ վատթար պայմաններում էին: Ադրբեջանական իշխանությունները մյուս ազգությունների ռազմագերիներին ազատ էին արձակում, իսկ հայերին շարունակում պահել՝ ստիպելով աշխատել ինչպես ստրուկներ: Հայ աշխատավորությունը, բանվորությունը ազատ տեղաշարժվելու և աշխատանք գտնելու հնարավորություն չուներ: Չնայած հայտարարվել էր բոլոր բաքվեցիների տեղաշարժվելու իրավունքի մասին,

[17] Տե՛ս «Աշխատավոր», 1918, 18 հոկտեմբերի:
[18] Նույն տեղում, 23 հոկտեմբերի:
[19] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 50, թթ. 1-2:
[20] Տե՛ս «Աշխատավոր», 1918, 16 նոյեմբերի:

սակայն հայերը դրանից չէին օգտվում: Տեղեկացվեց նաև այն մասին, որ հայերը «թշվառ ընտանիքներին օգնելու և որբերին խնամելու համար» զրկված են անգամ բարեգործական հաստատություններ[21] ունենալու հնարավորությունից: Ադրբեջանական կառավարությանը դիմելով՝ Բագրատ եպիսկոպոսը ցանկանում էր պարզել հայ բնակչության դրությունը Ադրբեջանում, իմանալ՝ հայերի վրա տարածվո՞ւմ են արդյոք քաղաքացիական իրավունքները, թե՞ նրանք շարունակելու են մնալ օրենքից դուրս[22]:

Բաքվի հայությանը մտահոգող խնդիրներից մեկն էլ ազգային-հասարակական իրավունքից զուրկ լինելն էր, այն դեպքում, երբ Բաքվում ապրող մյուս ազգություններին իրավունք էր վերապահվում ունենալ իրենց խորհուրդները[23]: «Հայերին արգելվում է անգամ ունենալ բարեգործական ֆունկցիաներով օրգան, չնայած նրանք ավելի քան մյուս ազգությունները կենսականորեն հետաքրքրված էին այդ օրերը ունենալ հատուկ հասարակական օրգաններ՝ մասսայական դժբախտությունների դեմ պայքարելու համար, օգնելու սովյալ ընտանիքներին, ճակատագրին թողնվածների որբերին»[24],- ասված էր Բաքվի հոգևոր առաջնորդ Բագրատ եպիսկոպոսի հաշվետու գրության մեջ: Ադրբեջանի նախարար-նախագահի ուշադրությունը հրավիրելով հայերի իրավազուրկ դրության վրա, հոգևոր առաջնորդը խնդրեց չմերժել հայ հասարակական ձգտումները և ուշադրության արժանացնել շոշափված խնդիրները: Սակայն դրանից հետո էլ հայերի նկատմամբ հետապնդումներն ու խտրականությունը շարունակվեցին: Նրանք չէին կարողանում երևալ արհեստավորական շրջաններում, շատերը շարունակում էին մնալ բանտերում՝ առանց դատ ու մեղադրանքի, բռնագրավված էր նրանց ունեցվածքը: «Բաքվի նավթային շրջաններում աշխատում էին մեծ թվով հայեր, որոնք նույնպես ենթարկվում էին խտրականությունների: Կրճատվող շտատների մեջ մշտապես արձակվում և տուժում էին հայերը, իսկ մյուս կողմից նավթային ռայոններում տիրում են այժմ հայերի ֆիզիկական գոյության համար այնպիսի անտանելի պայմաններ, որ հայ բանվորը փաստորեն չունի ոչ մի հնարավորություն անվտանգ աշխատանքի դուրս գալու»[25], - գրում է ականատես Բախշի Իշխանյանը:

Թիֆլիսից, Երևանից, Գանձակից, Ղարաբաղից Բաքվում գտնվող շատ հայ ընտանիքների համար, որոնք ցանկանում էին վերադառնալ հայրենիք, իշխանություններն արգելքներ էին հարուցում: Պատճառը նրանց հայ լինելն էր: Ադրբեջանի իշխանությունները ոչինչ չէին անում Էնզելիում, Պետրովսկում, Մերձկասպյան ափերին գտնվող հայ փախստականներին վերադարձնելու համար: Այլազգիների համեմատ ինչպես հայ մտավորականության, այնպես էլ նավթային արդյունաբերությունում աշխատող հայերի համար ստեղծվել էին վատթարագույն պայմաններ:

Բաքվում արգելված էին հայերեն գրելն ու խոսելը, հայկական թերթերի վաճառքը:

---

[21] Տե՛ս **Ишханян Б.**, նշվ. աշխ., էջ 11:
[22] Տե՛ս նույն տեղը:
[23] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 13, թ. 5:
[24] Նույն տեղում, ֆ. 223, ց. 1, գ. 5, թթ. 1-2:
[25] **Ишханян Б**. Указ. соч., с. 11.

Ադրբեջանի կառավարությունն արգելեց հայկական թերթերի տարածումը[26] հանրապետության ամբողջ տարածքում: Միայն 1919 թ. հունվարից Բաքվում սկսեցին լույս տեսնել ՀՅԴ օրգան «Յառաջը»[27] և նույն կուսակցության “Вперед”[28] թերթերը, նաև Հայ սոցիալ-դեմոկրատների «Մեր օրեր» թերթը:

1918 թ. հոկտեմբերի առաջին կեսին Ադրբեջանի կառավարության կարգադրությամբ նավթային հանքերի և դրանց կից ֆաբրիկագործարանային ձեռնարկությունների բոլոր աշխատավորները՝ հայ բանվորությունը, տեխնիկական ու գրասենյակային անձնակազմը, որոնք անվտանգության նկատառումներով աշխատանքից բացակայել էին 5-օրյա ժամանակով, մինչև հոկտեմբերի 8-ը պետք է աշխատանքից ազատված համարվեին: Պարզից էլ պարզ էր, որ այդ կարգադրությունն ուղղված էր հայերի դեմ, որոնք զանգվածային ձերբակալությունների, գերեվարության պատճառով հարկադրված թաքնվել էին և բնականաբար չէին կարողացել աշխատանքի դուրս գալ, այն դեպքում, որ արդյունաբերական շրջաններում ապրող մուսուլմանները նրանց սպառնում էին սպանել: Վերոնշյալ կարգադրությամբ հայ ծառայողներն ու բանվորները ազատվել էին իրենց զբաղեցրած տեղերից՝ հայտնվելով ծայրաստիճան աղքատության մեջ: Բաքվի Հայոց ազգային խորհուրդը, որն աշխատանքից ազատված հայ ծառայողներից ու բանվորներից օգնության դիմումներ էր ստանում իրենց իրավունքների պաշտպանության խնդրանքով, դիմեց Բաքվի նավթարդյունաբերողների համագումարի խորհրդին[29]:

Մեծ կորուստներ ունեցավ Բաքվի առևտրում խոշոր մասնակցություն ունեցած հայ առևտրական դասը, որը նախկինում իր ձեռքում էր կենտրոնացրել քաղաքի հայտնի փողոցների առևտրական տների ու խանութների մեծ մասը:

Հայտնվելով գործազուրկի կարգավիճակում ու անելանելի դրության մեջ՝ նրանք զրկվեցին ապրուստի միջոցից և ընտանիքը կերակրելու հնարավորությունից: Հազարավոր անգործ հայեր փողոց նետվեցին, խիստ ծանրացավ հայ չքավոր խավի վիճակը:

Բաքվի սեպտեմբերյան դեպքերից միայն մեկուկես ամիս անց Ադրբեջանի կառավարությունը հայերին թույլատրեց ստեղծել Ինքնօգնության կոմիտե: Դրա մասին Բաքվի հայոց հոգևոր առաջնորդ Բագրատ եպիսկոպոսը պաշտոնապես տեղեկացվեց 1918 թ. հոկտեմբերի 28-ին: Կոմիտեն, որի նախագահը վերջինս էր, որոշեց առաջին հերթին օգնություն ցուցաբերել հայ որբերին, որոնք նյութական միջոցների բացակայության պատճառով գտնվում էին ծայրահեղ պայմաններում: Օրական նրանք մահանում էին տասնյակներով[30]: Քանի որ գրեթե բոլոր հարուստները քաղաքից բացակայում էին, իսկ տեղի հայության ծանր վիճակում գտնվելու պատճառով հնարավոր չէր անհրաժեշտ գումար հայթայթել, Բաքվի նորա-

[26] Տե՛ս «Զանգ», Եր., 1918, 5 դեկտեմբերի:
[27] Տե՛ս նույն տեղը, 19 հունվարի:
[28] Տե՛ս նույն տեղը, 29 հունվարի:
[29] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 58, թթ. 45-46:
[30] Տե՛ս «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում», էջ 141-142:

ստեղծ Ինքնօգնության կոմիտեն նամակով դիմեց Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին՝ խնդրելով Թիֆլիսում հանգանակություն կազմակերպել կարիքավորներին և որբերին խնամելու համար, որոշ գումար հատկացնել ՀՀ միջոցներից և, որ շատ կարևոր էր, «անհապաղ Բաքու փոխադրել այն գումարները, որոնք տեղումդ ներկայացված են արդեն Բաքվա կարոտյալներին, օրինակ Թիֆլիսի քաղաքային ինքնավարության և այլն»[31]:

Սակայն հենց սկզբից կոմիտեի գործունեության համար ստեղծվեցին խոչընդոտներ: Անհրաժեշտություն առաջացավ օգնության կոչով դիմել տեղական հասարակությանը: Այդ նպատակով Բագրատ եպիսկոպոսի կողմից նամակ է ուղարկվում «Ազերբայջան» և «Կասպիի» թերթերի խմբագրություններ: Այն մամուլում պիտի հայտնվեր նոյեմբերի 6-ին, սակայն գրաքննությունը այդ կոչ-դիմումը չի թույլատրում հրապարակել: Գրաքննության միջամտությունը, անշուշտ, հայերի նկատմամբ հետապնդումների ու բռնությունների դրսևորումներից մեկն էր:

Ադրբեջանի ՆԳ նախարարը կարգադրել էր միլիցիայի միջոցով Բագրատ եպիսկոպոսին հրավիրել իր մոտ: Հրավերն ուներ այսպիսի բովանդակություն. «ՆԳ նախարարի կարգադրությամբ առաջարկվում է 5-րդ տեղամասի պրիստավին այսօր հոկտեմբերի 26-ին կեսօրին ժամը 12-ին պարտավորեցնել Բագրատ եպիսկոպոսին ներկայանալու ՆԳ նախարարի մոտ»[32]: Դիմումի նման միջոցը բնութագրում է Բաքվի իշխանությունների՝ հայերին վերաբերվելու ընդհանուր տոնը:

Հայրենակիցների ճակատագրով մտահոգ Հայաստանի Հանրապետությունն իր սուղ միջոցներից օգնություն հատկացրեց Բաքվի աղետյալներին: ՀՀ կառավարությունը, չկարողանալով անտարբեր մնալ Բաքվի պաշարումից և գրավումից հետո տնտեսական ծանր դրության մեջ հայտնված հայ ազգաբնակչության ճակատագրի հանդեպ, վարչապետի առաջարկությամբ 1918 թ. հոկտեմբերի 25-ին որոշում ընդունեց Բաքվի հայերին օգնելու համար 200.000 ռուբլի հատկացնելու մասին: Օրինագիծը խորհրդարանին ներկայացնելով՝ վարչապետը միաժամանակ պահանջեց, որ ցուցաբերվի շտապողականություն: Ավելին, առաջարկվեց 200.000-ը դարձնել կես միլիոն. առաջարկը[33] դրվեց քվեարկության և ընդունվեց: Բացի դրանից՝ խորհրդի պատգամավորներ Տիգրան Մուշեղյանն ու Հայկ Ազատյանը բողոքեցին տեղի ունեցած վայրագությունների դեմ, և ընդունվեց հետևյալ բանաձևը. «Հայաստանի խորհուրդը իր սրբազան պարտքն է համարում բողոքի ձայն բարձրացնել այն գազանությունների հանդեպ, որ թույլ տվին Բաքվի խաղաղ ազգաբնակչության վրա վայրենի հրոսակները»[34]: Շուտով Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի ֆինանսների գծով պատասխանատու Տեր-Հարությունյանցի անու-

---

[31] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 79, թ. 49:

[32] Նույն տեղում, ֆ. 223, ց. 1, գ. 42, թ. 9:

[33] Տե՛ս **Ռ. Գրիգորյան, Ա. Կիրիմյան**, Հայաստանի Հանրապետության առաջին քայլերը: Հայաստանի խորհրդարանի նյութերը (1918-1920թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1990, թիվ 3, էջ 106-138:

[34] «Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ.», Եր., 2010, էջ 71-72:

նով ստացվեց ՀՀ ֆինանսների նախարարի հեռագիրը, որում, տեղեկացնելով Բաքվի տուժածների համար ուղարկված 500.000 ռուբլու մասին, հանձնարարվում էր Արշակ Ջամալյանի միջոցով այն տրամադրել Ամերիկյան կոմիտեին[35]: Նկատենք, որ Բաքվի հայերին օգնելու գործն իրականացվում էր ինչպես Բաքվի Հայոց ազգային խորհրդի, այնպես էլ Ամերիկյան օգնության կոմիտեի միջոցով: Սակայն այդ գումարը տարբեր պատճառներով հնարավոր չեղավ հասցնել աղետյալներին, այդ իսկ պատճառով 1919 թ. հուլիսի 18-ին Հայաստանի խորհուրդը Բաքվի աղետյալներին օգնելու նպատակով օրենք ընդունեց վերաբացել Բաքվի աղետյալների համար հատկացված և չօգտագործված 500.000 ռուբլու վարկը[36]: 1919 թ. փետրվարին Հովհ. Քաջազնունին Թիֆլիսից Ալ. Խատիսյանին առաջարկում է չօգտագործված վարկը հանձնել Բաքվի Ազգային խորհրդին, որը փախստականների և աղետյալների կարիքների համար անգլիացիներից պարտք էր վերցրել 700 հազար ռուբլի[37], որը նրանք ետ էին պահանջում[38]: ՀՀ-ն հետագայում էլ շարունակեց Ադրբեջանի հայությանը տրամադրվող օգնությունը: Բաքվի գաղթականներին օգնելու մասին[39] ՀՀ խորհուրդը օրենք ընդունեց նաև նոյեմբերին:

Հայերի նկատմամբ իշխանությունների հետապնդումները պարբերական բնույթ էին կրում: Որքան էլ Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը փորձում էր Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի ուշադրությունը հրավիրել հայ բնակչության նկատմամբ շարունակվող բռնությունների և նրանց ողբերգական դրության վրա, արդյունք չէր տալիս: Վերջինս թեև վստահեցնում էր, թե Ադրբեջանի կառավարությունը մշտապես ջանքեր է գործադրում երկու ազգերի միջև ամբողջական հաշտության հասնելու համար, սակայն Խան-Խոյսկու կաբինետը շարունակում էր հայահալած քաղաքականությունը: Արտակարգ ծանր դրության մեջ էին գտնվում ինչպես բանտերում փակվածները, այնպես էլ ազատության մեջ գտնվողները:

Հայոց Ազգային խորհուրդը շարունակում էր մնալ ցրված, մինչդեռ Բաքվի բոլոր ազգային խմբերն ունեին իրենց ներկայացուցչական կազմակերպությունները: Այդ պատճառով հայ հիվանդները, վիրավորները, չքավորները մնացել էին առանց խնամքի, քանի որ նրանց օգնող կազմակերպությունը արգելքների էր հանդիպում Ադրբեջանի կառավարության կողմից[40]: Ի դեպ, բռնությունների էին ենթարկվում բոլոր հայերն անխտիր, անգամ ՀՀ իշխանության ներկայացուցիչները: Նույնիսկ ՀՀ կառավարության տրամադրած անհրաժեշտ վկայականները չէին օգնում: Հայերի հա-

---

[35] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 79, թ. 58:

[36] Տե՛ս նույն տեղը:

[37] Էնզելիից և Կասպից ծովի մյուս նավահանգիստներից հայ փախստականների վերադարձն իրականացնելու խնդրանքով Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը, որն անգլիացիների ժամանումով վերսկսել էր իր գործունեությունը, դիմել էր բրիտանական հրամանատարությանը՝ հայտնելով, որ փախստականների տեղափոխման ծախսերը կփոխհատուցվի ՀՀ կառավարության կողմից:

[38] Տե՛ս **Օ. Բալիկյան**, Հովհ. Քաջազնունու նամակները Ալ. Խատիսյանին (1919 թ. վերջ-1920 թ. ապրիլ), «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1991, թիվ 3, էջ 96:

[39] Տե՛ս նույն տեղը:

[40] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 13, թ. 5:

մար վտանգավոր էր հատկապես երկաթուղով երթևեկելը[41], քանի որ հայորսությամբ զբաղվող ադրբեջանցիներն անընդմեջ հարձակումներ էին գործում գնացքների վրա, հայերին իջեցնում էին վագոններից, կողոպտում, թալանում, գերի տանում, հաճախ էլ սպանում էին:

Մինչև դաշնակիցների մուտքը քաղաք կենդանի մնացած հայերը գտնվում էին օրենքից դուրս վիճակում՝ զուրկ տարրական իրավունքներից:

Շարունակում էր ծանր մնալ հատկապես բանտերում գտնվող հայ ձերբակալվածների դրությունը, որոնք, զրկված լինելով բավարար սննդից, արժանանում էին անմարդկային վերաբերմունքի: Այսպես՝ Ադրբեջանի ՆԳ նախարար Բեբուտ խան Ջևանշիրը, հոկտեմբերի 29-ին անձամբ այցելելով Բաիլովի բանտ, ձերբակալվածներին հայտարարել էր, որ կալանվածները, անկախ այն բանից, մեղավոր են, թե ոչ, ազատ կարձակվեն միայն այն ժամանակ, երբ ինքը կհամոզվի, թե «որքանով չեն նրանք մասնակից եղել մարտյան և հետագա իրադարձություններին, այսինքն ռազմաճակատի պաշտպանությանը»[42]:

Ադրբեջանում թուրքական զորքերի ներկայության ողջ ընթացքում հայ գերիները շարունակեցին մնալ անտանելի պայմաններում՝ ենթարկվելով անմարդկային տառապանքների և ծաղրուծանակի:

Համաշխարհային պատերազմի փոփոխված պայմաններում, երբ պարզ դարձավ, որ Քառյակ դաշինքը պատերազմը տանուլ է տվել, Ադրբեջանի կառավարությունը դաշնակիցների կողմից Բաքուն գրավելու հետ կապված սկսեց կամաց-կամաց բաց թողնել հայ ձերբակալվածներին: Սակայն շատ բանտարկյալներ մինչև դաշնակիցների ժամանումը շարունակում էին տառապել բանտերում:

Անգլիացիների գալու նախօրյակին Ադրբեջանի կառավարությունն ազատ արձակեց քաղաքում պահվող գերիների միայն մի մասին. մնացածին՝ ավելի առողջներին ու երիտասարդներին՝ մոտ 460 հոգու, նոյեմբերի 16-ին ուղարկեց դուրս՝ կայարաններ: Հայ գերիներին ազատելու համար դաշնակիցների հրամանատարությանն ու Ադրբեջանի կառավարությանն ուղղված Բաքվի Հայոց Ազգային խորհրդի դիմումները ապարդյուն էին անցնում:

Թուրքերն Անդրկովկասում մնացին մինչև նոյեմբերի կեսերը, բայց այդ ընթացքում, հավատարիմ իրենց հակահայ քաղաքականությանը, պատճառ դարձան բազմաթիվ կոտորածների: Հայերի հետ նրանք խոսում էին ուժի դիրքերից և ամեն անգամ սպառնում հաշվեհարդար տեսնել:

Այսպիսով, 1918 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Բաքվի հայությունը շարունակեց մնալ ահաբեկված, կոտորածի վախի մեջ: Քաղաքի փողոցներում ու տներում պարբերաբար իրականացվում էին հայերի ձերբակալություններ, կազմակերպվում շուրջկալներ: Ձերբակալվածները գտնվում էին սոսկալի պայմաններում, որոնց ոչ մի մեղադրանք չէր ներկայացվում: Ամենից ցավոտը 1918 թվականի կոտորածների ընթացքում գերված հայերի հարցն էր: Բոլոր քաղաքացիների՝ առանց ազգության ու

[41] Տե՛ս «Աշխատավոր», 1918, 16 նոյեմբերի:
[42] «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում», էջ 147:

դավանանքի տարբերության, միևնույն վերաբերմունքից օգտվելու, կյանքի, գույքի ու իրավունքների հավասարության մասին Ադրբեջանի կառավարության պաշտոնական հայտարարությունները հայերի պարագայում չէին գործում: Այս դրությունը շարունակվեց մինչև դաշնակիցների կողմից Բաքվի զինագրավումը:

ЮРИЙ ГУЛЯН – ***Политико-правовое положение армян в Азербайджане (сентябрь–ноябрь 1918 г.).*** – После сентябрьских погромов 1918 г. армянское население Баку оставалось угнетённым и под постоянной угрозой истребления. В городе периодически проводились аресты армян, организовывались засады. Арестованные содержались в ужасающих условиях, при этом им не предъявляли никаких обвинений. Самым болезненным был вопрос тех, кого захватили в плен во время погромов.

Официальные заявления азербайджанского правительства о равенстве прав всех граждан независимо от национальности и вероисповедания оставались пустой декларацией. Так продолжалось вплоть до вооружённого захвата Баку союзниками.

YOURA GHULYAN – ***The Legal-Political State of Armenians in Azerbaijan (September – November, 1918).*** – After the massacres organized in 1918, the Armenians in Baku remained horror-stricken. A number of arrests were periodically realized in the streets and houses in Baku. The arrested Armenians were under terrible conditions, but the Azeri government didn't incriminate them of anything. The issue if the captive Armenians arrested during the massacres still remained the saddest problem. The official announcements of the Azeri government on the equality of life, property and the rights of all citizens (regardless of nation and religion), did not function with respect to Armenians. This state of affairs lasted till the seizure of Baku by the allied forces.